ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

27.03.2018թ. | ժամը 18:00-21:00 | ՀՀ կառավարություն

Մասնակիցներ՝ Բազմաշահառու խմբի անդամներ

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
	Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն

	զարգացման կենտրոնի փորձագետ
Արթուր Համբարձումյան (ԲՇԽ ժամանակավոր անդամ)	«Հասարակական ձայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ

ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

Լիլիա Շուշանյան	քարտուղարության ղեկավար
Լուսինե Թովմասյան	քարտուղարության փորձագետ
Դավիթ Շինդյան	քարտուղարության փորձագետ

Հյուրեր՝

Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Ալեն Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)
Կառլ Ուլբրիխտ	ՀԱՀ ՊՀԿ
Դավիթ Հակոբյան	ՀԱՀ ՊՀԿ

Բացականեր՝

Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն

Արձանագրող՝ Լուսինե Թովմասյան

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի բացում, կատարված աշխատանքների ամփոփում:

Դ.Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և հայտնեց, որ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի նիստը հագեցած օրակարգ ունի: Նշվեց, որ ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում սկսվել է կարևոր փուլ, որի ընթացքում նախատեսվում է իրականացնել ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով աուդիտորական կազմակերպության

ներգրավման աշխատանքները: ԱՃԹՆ-ին աջակցության նպատակով Համաշխարհային բանկի դրամաշնորհի հաստատումը գտնվում է վերջնական՝ ստորագրման փուլում:

ԱՃԹՆ-ի շրջանակում մշակված օրենսդրական փաթեթն անհետաձգելի կարգով քննարկվել և ընդունվել է Ազգային ժողովում: Դրանով ոչ միայն մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների և պետական լիազոր մարմինների համար սահմանվել է ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջ, այլև սահմանվել են հանքարդյունահանողների հետ պայմանագրերի բացահայտման, համայնքներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց վճարված գումարների բացահայտման իրավական հիմքեր:

Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը վերաձևակերպվել է կառավարության արձանագրային որոշման, որը պետք է քննարկվի կառավարության առաջիկա նիստում: ՀՀ վարչապետի մարտի 27-ի թիվ 297-Ա որոշմամբ կազմվել է իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբ: Խմբում ընդգրկվել են ինչպես ԲՇԽ-ի համապատասխան աշխատանքային խմբի անդամները, այնպես էլ ներկայացուցիչներ այլ մարմիններից (Կենտրոնական բանկ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով) և ոլորտային փորձագետներ: Մարտի 30-ին տեղի կունենա խմբի առաջին հանդիպումը, որի աշխատանքներին մասնակցությունն առանձնապես կարևորվում է: Խմբի անդամներին կոչ արվեց հանդիպմանը գնալ նախապես պատրաստված, ընդ որում յուրաքանչյուր խմբակցության անդամ աշխատանքային խմբում միաժամանակ պետք է ներկայացնի խմբակցության ընդհանուր մոտեցումը, որպեսզի խմբի որոշումները համահունչ լինեն ԲՇԽ-ի մոտեցումներին:

Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից ներկայացվել է հանրային հաղորդակցության ռազմավարության նախագիծը: Հաղորդվեց, որ մեծածավալ աշխատանք է կատարվել, սակայն ԲՇԽ-ն և քարտուղարությունն առաջարկում են փաստաթուղթը համապատասխանեցնել ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներին և ֆինանսական միջոցներին, ինչպես նաև նախագծում ինտեգրել իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը՝ միջոցառումների վերջնաժամկետներով, Համաշխարհային բանկի դրամաշնորհով նախատեսված գործողությունները: Առաջարկվեց նաև ռազմավարության տեքստային հատվածը (առանց հավելվածների) կրճատել մինչև 30 էջ, իսկ գործողությունները՝ հստակեցնել՝ դրանք կիրառելի դարձնելու նպատակով: Քարտուղարությանը հանձնարարվեց՝ նախագծի վերաբերյալ նկատառումները ներկայացնել ՀԱՀ ՊՀԿ-ին: Նշվեց նաև, որ նախագծի 2 տարբերակներն էլ կտրամադրվեն ԲՇԽ-ին:

ՀԱՀ ՊՀԿ-ի ներկայացուցիչը ներկայացրեց օրենսդրական դաշտի ուսումնասիրության և պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքների կարգավիճակը:

Դ.Հարությունյանը քննարկումներին ավելի արդյունավետ ընթացք հաղորդելու նպատակով առաջարկեց, որ այսուհետ այն դեպքերում, երբ օրակարգային հարցի վերաբերյալ նիստի մասնակիցները չունեն հարցեր կամ առաջարկություններ, հարցը համարել չքննարկվող, ինչն ընդունվեց ԲՇԽ-ի անդամների կողմից:

Քննարկված հարցերը

1. ԱՃԹՆ-ի զեկույցի հետ կապված մի շարք բովանդակային հարցերի քննարկում և ընդունում

ԱՃԹՆ-ի հաշվետվություն ներկայացնող ընկերությունները և պետական մարմինները

Առաջարկվեց, որ ԱՃԹՆ-ի հաշվետվություններ ներկայացնեն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողները՝ բացառությամբ սնանկ ճանաչվածների: Այս դեպքում, ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համար հաշվետու կդառնան 28 ընկերություններ: Համապատասխան ֆինանսական հոսքերի վերաբերյալ տվյալներին տիրապետում են երեք պետական մարմիններ՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ բնապահպանության նախարարությունը, համայնքները՝ որոնց տվյալները e-reporting-ի համակարգում կմուտքագրվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով: Առաջարկվեց, որ պետության կողմից հաշվետու դառնան վերոհիշյալ մարմինները: **Որոշումն ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Համադրվող ընկերությունները

Առաջարկվեց՝ համադրվող համարել այն կազմակերպությունները, որոնք հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ (բացառությամբ՝ բնապահպանության նախարարությանը վճարված գումարները և մաքսային վճարներն ու տուրքերը): Տեղեկացվեց, որ կատարվել է վերլուծություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ այս դեպքում համադրվող ընկերությունների ցանկում կհայտնվեն այն կազմակերպությունները, որոնք 2016-2017թթ. իրականացրել են ակտիվ գործունեություն և նրանց կողմից վճարված հարկերն ու վճարումներն էական են: **Որոշումն ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

ԱՃԹՆ-ի զեկույցում/հաշվետվություններում ներկայացվող հարկերը և եկամուտները

Հիմնվելով նախնական ուսումնասիրության և վերլուծությունների վրա՝ առաջարկվեց՝ հաշվետվություններում հարկերն ու վճարումներն ընդգրկվել առանց շեմերի և երկկողմանի ներկայացնել հետևյալ ֆինանսական հոսքերը՝

1. շահութահարկ
2. եկամտային հարկ
3. ավելացված արժեքի հարկ
4. ակցիզային հարկ
5. ռոյալթի
6. բնապահպանական վճարներ (հարկ)
7. բնօգտագործման վճարներ
8. մշտադիտարկումների իրականացման վճարներ
9. մաքսային տուրքեր և վճարներ
10. ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք
11. ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք
12. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում
13. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը
14. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման վճար
15. հողի հարկ
16. գույքահարկ
17. ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար
18. տույժեր (նաև տեղական)
19. տուգանքներ (նաև տեղական)
20. հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված ֆինանսական և ոչ ֆինանսական պարտավորություններ:

Միայն ընկերությունների կողմից՝ միակողմանիորեն տրամադրվող ֆինանսական հոսքերն են՝ ՏԻՄ-երին, ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ըստ կազմակերպությունների), ինչպես

նաև ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ֆիզիկական անձանց դեպքում կներկայացվեն ֆիզիկական անձանց ընդամենը թիվը և վճարված ընդհանուր գումարը): **Որոշումն ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Հոսքերի կշիռներ. ֆինանսական հոսքերի համադրման համար էականության բանաձև

Հիմնվելով կատարված վերլուծության վրա՝ առաջարկվեց էական համարել և համադրել այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը արդյունահանվող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1% և ավելի: **Որոշումն ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Համադրման դեպքում թույլատրելի/ոչ էական շեղման սահմանաչափ

Հիմնվելով ԱՃԹՆ-ի միջազգային փորձի ուսումնասիրության վրա՝ առաջարկվեց սահմանել թույլատրելի/ոչ էական շեղման սահմանաչափ: ԲՇԽ-ի անդամները **ներկայացրին** իրենց առաջարկները սահմանաչափի վերաբերյալ, որոնք տատանվում էին տվյալ ֆինանսական հոսքի 1-5 տոկոսի սահմաններում: Առաջարկվեց նաև միաժամանակ սահմանել բացարձակ սահմանաչափ: Քննարկման արդյունքում ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **որոշեց**, որ ֆինանսական հոսքի անհամապատասխանությունն անկախ ադմինիստրատորի կողմից վերջնական համադրման նպատակով կհետաքննվի, եթե երկկողմանի ներկայացված ֆինանսական հոսքերում անհամապատասխանության չափը կազմում է ֆինանսական տվյալի 4 տոկոսը, սակայն ոչ պակաս քան 1 միլիոն ՀՀ դրամը: Տվյալ հաշվարկի հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացրած տվյալը, որն ավելի փոքր է:

ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ֆինանսական հոսքեր

ԲՇԽ-ն, հիմք ընդունելով նախնական ուսումնասիրությունը և այլ վերլուծություններ, քննարկումների արդյունքում ընդհանուր համաձայնությամբ **որոշեց**, որ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ֆինանսական հոսքերն են՝

- պետական ձեռնարկություններին կատարված և նրանցից ստացված վճարումները, քվազի-ֆիսկալ ծախսերը, շահաբաժինը, հավելավճարները, պետության արդյունահանման մասնաբաժնի վաճառքը կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտները. պետական ձեռնարկությունների առկայության հետ կապված ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները կիրառելի չեն,

- ենթակառուցվածքի ու ապրանքափոխանակության հետ կապված հոսքեր (4.3-րդ պահանջ).
- փոխադրումներից ստացվող եկամուտներ (4.4-րդ պահանջ)
- արտիզանային (artisanal) և փոքրամասշտաբ հանքարդյունահանում:

ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ **որոշեց**, որ ԱՃԹՆ-ի զեկույցում կընդգրկվեն հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները, կամավոր սոցիալական ներդրումը համայնքներում, վճարումները ոչ առևտրային իրավաբանական և ֆիզիկական անձանց: Անկախ աուդիտորը ԱՃԹՆ-ի զեկույցում կնկարագրի նաև բնապահպանական վճարներից համայնքներին ըստ ներկայացված ծրագրերի տրամադրված սուբվենցիաների գործընթացը, ինչպես նաև 2016-2017թթ. տվյալներ: Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը հնարավորություն չի ընձեռում իրականացնել հանքարդյունաբերությունից ստացված եկամուտների բաշխման ներկայացում: ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ կներկայացվի բյուջետային համակարգի նկարագրությունը:

Տվյալների ապաագրեգացման աստիճանը

Հիմնվելով կատարված վերլուծության վրա՝ ԲՇԽ-ին ընդհանուր համաձայնությամբ **որոշում ընդունեց**, որ տվյալները կներկայացվեն ըստ կազմակերպությունների (հարկ վճարողի): Հաշվի առնելով գործող հարկային օրենսդրությունը՝ ներկայում հնարավոր չէ իրականացնել ըստ ծրագրերի տվյալների ներկայացում (project-level reporting): Մասնակիորեն, այն վճարները, որոնք ուղղակիորեն կապված են տվյալ ոլորտում գործունեության հետ: ԱՃԹՆ-ի զեկույցում անկախ ադմինիստրատորը կներկայացնի առաջարկություններ հետագա տարիներին այս սկզբունքը կիրառելուն ուղղված անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ:

Արտադրություն, արտահանում և զբաղվածություն

Հանքարդյունահանող ընկերությունները կտրամադրեն ըստ արտադրատեսակների արտադրության, ներքին իրացման ու արտահանման, ինչպես նաև զբաղվածության վերաբերյալ տվյալներ: Արտահանման վերաբերյալ տվյալներ կներկայացնի նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն:

2. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը կազմելու համար անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի ներկայացում և հաստատում

Ներկայացվեց, որ անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի (ՏԱ) նախագիծը ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է փետրվարի 20-ին, որը տեղայնացվել է՝ հիմնվելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից մշակված նմուշի վրա: ՏԱ-ն լրամշակվել է ազգային քարտուղարության կողմից և ներկայացվել ԲՇԽ-ի քննարկմանը: ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման աշխատանքները իրականացվելու են մի քանի փուլերով՝ (փուլ 1) նախնական վերլուծություն և մեկնարկային հաշվետվություն, (փուլ 2) տվյալների հավաքագրում, (փուլ 3) տվյալների նախնական համադրում, (փուլ 4) անհամապատասխանությունների քննում և ԱՃԹՆ-ի զեկույցի նախագիծ, (փուլ 5) ԱՃԹՆ-ի վերջնական զեկույց: ԱՃԹՆ-ի զեկույցը պետք է պարունակի վերլուծություն տնտեսության մեջ արդյունահանող ոլորտի ներդրման մասին՝ օգտագործելով համադրման ժամանակ հավաքագրված տվյալները: Բացի այդ, կոնտեքստային (ոչ ֆինանսական) տեղեկատվությունը պետք է ներառի համադրման զեկույցում հայտնաբերված տեղեկությունների համատեքստը կամ բացատրությունը: ԱՃԹՆ-ի զեկույցը պետք է տրամադրվի հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև անկախ ադմինիստրատորը պետք է իրականացնի զեկույցի տպագրությունը և զեկույցի հանրամատչելի տարբերակի ներկայացումը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացնի սահմանված ձևաչափով ամփոփ տվյալների տեղեկանքը:

Սահմանվել է, որ անկախ ադմինիստրատորը պետք է ունենա առնվազն 5 տարվա արտաքին ֆինանսական աուդիտորական գործունեության փորձ, պետք է տրամադրի իր կողմից մատուցած միջազգային աուդիտորական ստանդարտների համապատասխան մինչև 5 աուդիտորական ծառայությունների/ծրագրերի ցանկը, դրանց հակիրճ նկարագրությունը, պետք է ունենա Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական և իրավական ուսումնասիրությունների, հետազոտությունների կամ խորհրդատվության իրականացման փորձ, իսկ ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման կամ նմանատիպ նախկին փորձը կդիտվի որպես առավելություն: Կազմակերպության անձնակազմը պետք է ունենա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (International Federation of Accountants-IFAC), Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (Association of Chartered Certified Accountants-ACCA) կամ համարժեք որակավորում և այլն:

Անկախ ադմինիստրատորի ընտրության մրցութային հանձնաժողովում պետք է ընդգրկվեն 1-ական ներկայացուցիչ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցությունից: ԲՇԽ-ի խմբակցությունները **ներկայացրին** հանձնաժողովի անդամի

համապատասխան խմբակցությունների թեկնածուներին՝ Դ.Անանյանին, Ա.Ստեփանյանին և Ա.Գրիգորյանին:

ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ **որոշեց** հաստատել անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, իսկ դրանում փոփոխություն կատարելու դեպքում արագացված ընթացակարգով քննակել և ընդունել փոփոխությունները:

ԲՇԽ-ն մտահոգություն ներկայացրեց, որ զեկույցի մշակման համար նախատեսված ժամանակահատվածը բավարար չէ որակյալ աշխատանք իրականացնելու և ԱՃԹՆ-ի ստանդարտի ու ԲՇԽ-ի պահանջներին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի հրապարակման համար: Միաժամանակ, հաշվի առնելով, որ բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկվել են հիմնարար աշխատանքները նվազագույն ժամկետում կազմակերպելու համար, այդ թվում, ընդունվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթը, իսկ միջազգային գործընկերների հետ ճիշտ ժամանակին նախաձեռնվել են համապատասխան ծրագրերը, որոնք արդեն ընթացքում են, ԲՇԽ-ն **որոշեց**՝ զեկույցի հրապարակման վերջնաժամկետը 2,5 ամսով հետաձգելու խնդրագրով դիմել ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդին՝ նշելով ԲՇԽ-ի և ՀՀ կառավարության մինչ այժմ իրականացրած աշխատանքները և զեկույցի ժամանակին հրապարակմանը խոչընդոտող պատճառներն ու դրանց հիմնավորումը:

3. Հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի հաշվետվությունների ձևաչափի նախագծի ներկայացում

Ներկայացվեց ազգային քարտուղարության կողմից մշակված՝ հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի հաշվետվությունների ձևաչափի նախագիծը, որի մշակման ընթացքում մի շարք քննարկումներ են կայացել շահագրգիռ կողմերի հետ: Նշվեց, որ էլեկտրոնային համակարգով ԱՃԹՆ-ի հաշվետվություններ պետք է ներկայացնեն 28 մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողները և 3 պետական մարմիններ՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ բնապահպանության նախարարությունը և համայնքները՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով: Հաշվետվությունների հիմնական բաժիններն են.

- արտադրությունը, արդյունահանումը և զբաղվածությունը
- հարկերը, վճարները և տուրքերը
- տեղական հարկերը, վճարները
- տույժերը և տուգանքները

- սոցիալ-տնտեսական ներդրումը համայնքի բյուջե
- նվիրատվությունները, նվիրաբերությունները, անհատույց օտարումները

Տեղեկացվեց, որ ֆինանսական հոսքերը ներկայացվելու են և հաշվեգրման, և դրամարկղային մեթոդներով: ԲՇԽ-ն **որոշում կայացրեց**, որ անկախ ադմինիստրատորը համադրելու է հարկային հաշվարկով (հաշվեգրման մեթոդով) ներկայացված տվյալները:

Կարծիք հայտնվեց, որ հաշվետվություններում ներկայացված տվյալները բավականին ընդգրկուն են և շեշտադրվեց, որ անհրաժեշտ է նախքան դրանք կառավարության որոշմամբ հատատելը համաձայնեցնել անկախ ադմինիստրատորի հետ: **Հանձնարարվեց**՝ ԲՇԽ-ի անդամներին մինչև ապրիլի 3-ը ներկայացնել կարծիքներ ձևաչափերի նախագծի վերաբերյալ:

4. ԱՃԹՆ-ի 2017թ. աշխատանքային ծրագրի կատարողականի հաստատում

Ներկայացվեց ԱՃԹՆ-ի 2017թ. աշխատանքային ծրագրի կատարողականը՝ միջոցառումների իրականացման փաստացի ժամկետներով ու ծախսված ֆինանսական միջոցներով: ԱՃԹՆ-ի 2017թ. աշխատանքային ծրագրի կատարողականն **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

5. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի նախնական ուսումնասիրության վերջնական նախագծի ներկայացում և հաստատում

ԲՇԽ-ն **որոշվեց** ընդունել ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի նախնական ուսումնասիրության նախագիծը, սակայն ԲՇԽ-ի անդամները առաջարկեցին որոշ շտկումներ կատարելու նպատակով մինչև ապրիլի 3-ը ներկայացնել նախնական ուսումնասիրության վերջնական նախագծի վերաբերյալ առաջարկներ, որից հետո նախնական զեկույցը կհրապարակվի:

6. ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագրի ներկայացում և հաստատում

Ներկայացվեց ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագիրը, որում արտացոլված են դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում հաստատված միջոցառումները՝ վերանայված վերջնաժամկետներով: ԲՇԽ-ն առաջարկեց կատարել փոփոխություն 23-րդ միջոցառման ձևակերպման մեջ և ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագիրն **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով)՝ առաջիկայում լրացումներ կատարելու պայմանավորվածությամբ:

Տեղեկացվեց, որ ԲՇԽ-ի կարծիքին կներկայացվի ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ քաղաքացիական հասարակության և լրագրողների ակտիվացման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հարցաթերթը, որի արդյունքների ամփոփումից հետո կներկայացվի քաղաքացիական հասարակությանը տրամադրված դրամաշնորհային ծրագրի շրջանակով իրականացվելիք միջոցառումների ցանկը:

7. Այլ որոշումներ և հարցեր

- Ներկայացվեց՝ որ ընթանում են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի պատրաստման աշխատանքները. ավարտվել են կայքի դիզայնի մշակման աշխատանքները, իսկ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի ստեղծման աշխատանքները կսկսվեն, երբ առկա կլինեն ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ձևաչափերը:

- ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը առաջարկեց անցկացնել ԲՇԽ-ի նիստ՝ նվիրված Թեղուտի հանքավայրի շահագործման դադարեցման խնդրին: **Առաջարկվեց՝** ԲՇԽ-ին ներկայացնել նիստի օրակարգը: